— Ապա ինչի՞ համար պէտք է գայի, հէր օրհնած, — պատասխանեց նա եւ մօտեցաւ գանձապահին:

— Այդ ծերունու դէմքը ինձ ծանօթ երեւաց, — ասաց բաղեշցին նրա հեռանալուց յետոյ:

— Պէտք է որ ծանօթ լինի... — պատասխանեց վաճառականը խորդաւոր ձայնով: — Դա վարպետ Փանոսն է. առաջ ներկարարի մի հասարակ գործարան ունէր, իսկ այժմ այնքան կատարելագործել է, որ իմ գործոածները բոլորը այնտեղ են ներկւում:

Յաճախորդները հանգստութիւն չէին տալիս, մէկը դուրս էր գալիս, մի քանիսը մտնում էին: Գործողութիւնները իրանց կենդանի շարժման մէջն էին: Ներս մտաւ մի բարձրահասակ. հսկայատիպ պարոն, ալեխառն մօրուքով, եւ յատակի տախտակամածը թնդաց նրա ամուր ոտքերի տակ: Նա, առանց ոչ ոքին ողջունելու, կանգնեց սենեակի կենտրոնումը, աջ ձեռքը մեկնելով դէպի գլխաւոր գործակատարը, իսկ թուխ երեսը դարձնելով դէպի կրպակատէրը, գոչեց որոտալից ձայնով.

— Ասացէ՛ք այդ պարոնին, եթէ միւս անգամ հակերը իր ժամանակին չհասցնի, ես բոլորը ծովը կը նետեմ:

Նա, առանց պատասխանի սպասելու, իսկոյն դուրս գնաց:

— Ճանաչեցի՞ք դրան, — ասաց վաճառականը՝ դիմելով դէպի բաղեշցին:

— Ճանաչեցի... — պատասխանեց նա: — «Բերզէն-օղլին» է... Աւանց գիւղի նաւաստին... Այդ մարդը մինչեւ վերջը մնաց անտաշ...

— Բայց շատ օրինաւոր մարդ է, գիտէ՞ք, այժմ շոգենաւի ընկերութեան գլխաւոր նաւապետն է:

— Գիտեմ: Ես նրա շոգենաւով եկայ Բաղէշից:

Վաճառականը խօսքը փոխեց, հարցնելով.

— Ինձ այն ասացէք, ի՞նչ կայ ձեզ մօտ, այնտեղ, Բաղէշում:

— Հետաքրքիր ոչինչ չկայ, միայն խեղճ Հաջի-Իսաղը վախճանուեցաւ:

— Միթէ՞, նա պէտք է բաւականին հարստութիւն թողած լինի:

— Ո՛չ այնքան, որքան կարծւում էր: Վերջին ժամանակ նա շատ ծախսեց զանազան նպատակների համար... Իսկ ինչ որ մնացել էր, նրա մի մասը կտակել է, որ այն գումարով մի դպրոց հիմնի, որի մէջ սովորեն հայ երեխաներ, առանց կրօնի խտրութեան:

Վաճառականի դէմքի վրայ երեւաց զարմացման նման մի բան: